РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ МАРЗ

REPUBLIC OF ARMENIA
RA MARZ OF SHIRAK

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

<<ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 4 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>ՀՈԱԿ

N 1
__06__ փետրվարի - 2015թ

ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով
շրջանակային համաձայնագրով
գնումներ իրականացնելու նպատակով
գրանցված հնարավոր մասնակիցներին

«ՇՄԱՔ4ՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:
Ապրանքների մատակարարման պայմանները/տեխնիկական բնութագիրը, գնման և վճարման ժամանակացույցերը/ ներկայացված են պայմանագրի նախագծով և հավելվածներով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Սասունցի դավիթ1 հասցեով, <<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ , մինչև 2015 թ-ի _____18___-ին, ժամը __15__-ը/ հեռ. 093847759 /:

Հայտերը կբացվեն ք. Արթիկ, Սասունցի Դավիթ 1 <<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ-ում 2015 թ-ի ___18__-ին, ժամը __15__-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և հավելվածները:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝ Հ. Աջամօղլյան

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ
N ՇՄԱՔ4ՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ-15/1

Ք.Արթիկ «-----» ---------- 2015թ.

<<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ, ի դեմս - Տնօրեն՝ Հ Աջամօղլյան, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և ----------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Գնման ժամանակացույց-Տեխնիկական բնութագրով նախատեսված ---------- (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Գնման ժամանակացույց-Տեխնիկական բնութագրով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ ..... (.....) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության

միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2013 թ-ի դեկտեմբերի 31-ը:

9.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ----- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած ----- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ Ք Արթիկ,Սասունցի Դավիթ1 ԱՇԻԲ ՓԲԸ Հ/Հ 247041126183000 ՀԿՀՀ 06103762 Տնօրեն՝ Հ.Աջամօղլյան _____ Կ.Տ ստորագրություն	---------- ---------- ---------- ---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 2
«____» _____ 2015 թ. կնքված
«ՇՄԱՔ4ՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ - 15 / 1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N ը/կ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԵՎ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Նախատեսվում է ֆինանսավորվել 2015թ.-ին համայնքի բյուջեի միջոցների հաշվին (աճողական կարգով), ընդ որում												Ընդամենը
		3 ամիս			6 ամիս			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
	<<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդի ձեռք բերում	0	0%	8%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ
ք.Արթիկ,Սասունցի Դավիթ1
ԱՇԻԲ ՓԲԸ
Հ/Հ 2470411261830000
ՀՎՀՀ 06103762
Տնօրեն՝ Հ. Աջամօղլյան
_____ Կ.Տ
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ
_____ Կ.Տ
ստորագրություն

Գնորդ

<<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ
ք.Արթիկ, Սասունցի Դավիթ 1
ԱՇԻԲ ՓԲԸ

Հ/Հ 2470411261830000
ՀՎՀՀ 06103762

Վաճառող

Հ/Հ_____
hh_____

ՀՎՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«------» ---------- 2------թ.

Պայմանագրի անվանումը՝ «----------»:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «------» ---------- 2------թ

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ N ՇՄԱՔ4ՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ-15/1

Գնորդն, ի դեմս ---------- և Մատակարարն՝ ի դեմս ----------, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի (Համաձայնագրի) կատարման վերաբերյալ «------» ---------- 2------թ կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N-------- եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը «------» ---------- 2------թ.-ից «------» ---------- 2------թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Գնորդ

<<Ար թիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ

_____

ստորագրություն

Վաճառող

ստորագրություն

Հավելված 1

«____» _____ 2015 թ. կնքված
«ՇՄԱՔԿՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ - 15 / 1» ծածկագրով գնման պայմանագրի

Արթիկի թիվ <<4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ 2015թ. կարիքների համար սննդի ձեռք բերման

Գնման ժամանակացույց- տեխնիկական բնութագիր

Հ/հ	Ապրանքի անվանումը	Ձեռք բերվող ապրանքների տեխնիկական բնութագրերը	Չ/Մ	Քանակ	Քանակ	Քանակ	Քանակ	Ընդ. Քանակ	Մատակարարման ռեժիմ
				I եռամ.	II եռամ.	III եռամ.	IVեռամ.		
1	Ձու	Ձու սեղանի կամ դիետիկ, 1-ին կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի ,Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասինե N 1438-Ն որոշմանը և ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:1-ին կարգի, Ձու սեղանի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, սեղանի ձվի պահման ժամկետը 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	հատ	400	1200	1200	1200	4000	շաբաթական
2	մսի պահածո	Պահածոներ տավարի մսի բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ	կգ	20	60	60	60	200	շաբաթական
3	Տավարի միս	Միս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 oC -ից մինչև 4 oC ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված ,Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգիե և ,Սննդամթերքի անվտանգության մասին	կգ	10	30	**30**	**30**	**100**	շաբաթական

4	խտացրած կաթ	Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0Т-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	20	60	60	60	200	շաբաթական
5	շաքարավազ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված): ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	55	165	165	165	550	ամսեկան
6	թխվածքաբլիթ	Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված,խոնավությունը՝ 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20%-ից մինչև 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	15	45	45	45	150	շաբաթական
7	պանիր լոռի	[illegible] դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի	կգ	8	24	24	24	80	շաբաթական
8	կանաչի	Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և՝Սննդամթերքի անվտանգության մասին՝ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածիԹարմ,առանց արտաքին վնասվացքների: Տարբեր տեսակի և չափսեր: ՀՀ գործող նորմերին և ստանդարտերին համապատասխան:	կապ	6	18	18	18	60	օրական
9	մածուն	Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000Т,: անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված ,Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	30	30	30	100	օրական

10	Կակաո	Խոնավությունը՝ 6,0 %-ից ոչ ավելի, pH-ը՝ 7,1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90,0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	**կգ**	0	0,5	**0,5**	**0**	**1**	շաբաթական
11	Կարագ սերուցքային	Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածՍերուցքային, 71.5-82.5% յուղայնությամբ, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գր, ածխաջուր 0,7գր, ԳOUS 37-91, 740 կկալ, 20-25 կգ գործարանային փաթեթներով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	9	27	27	27	90	շաբաթական
12	Կարտոֆիլ	վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	**260**	**780**	**780**	**780**	**2600**	շաբաթական
13	Մակարոն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Մակարոնեղեն անդրոժ խմորից, չափածրարված: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	**45**	**135**	**135**	**135**	**450**	շաբաթական
14	բուսական յուղ	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված , փաթեթավորումը՝ շշալցված մինչև 3լիտր տարողություններում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	լիտր	30	90	90	90	300	շաբաթական
15	սպիտակաձավար	Պատրաստված է ցորենի ծեծած տեսակից,սպիտակ,թեփը հանած:համապատասխանում է ՀՀ գործող նորմերին	կգ	0	1	**2**	**2**	**5**	շաբաթական

16	Ոսպ	Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածիՄաքուր, չոր՝ խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14,0-17,0 % ոչ ավելի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	7	21	21	21	70	շաբաթական
17	Ոլոռ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Չորացրած, կեղևած, դեղին գույնի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	7	21	21	21	70	շաբաթական
18	կաթ պաստեռային	Բարձր տեսակի, փայլուն սպիտակ գույնի, առանց ավելորդ խառնուրդների և հոտի, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	15	45	45	45	150	օրական
19	հալվա	Բաղադրությունը՝ խարկված, մանրացված արևածաղկի հատիկներ, կրախմալ: Խոնավությունը ոչ ավել 70 %-ից: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	5	15	15	15	50	շաբաթական
20	Տոմատի մածուկ	Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի : Բարձր տեսակի ապակե տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ապակե տարաններով: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	5	15	15	15	50	շաբաթական
21	Սոխ	Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Ընտիր տեսակի, թարմ, կիսակծու, նեղ մասի տրամագիծը 3սմ-ից ոչ պակաս: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	12	36	36	36	120	շաբաթական
22	Հնդկաձավար (գրեչկա)	Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 % ոչ պակաս, գործարանային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	12	36	36	36	120	շաբաթական

23	Աղ, կերակրի մանր	Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀUS 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50±10 մգ/կգ: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	11	33	33	33	110	ամսեկան
24	Թեյ	Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի Բայխաթեյ սև, տերևներով, գործարանային փաթեթավորմամբ£ ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	տուփ	5	15	15	15	50	ամսեկան
25	Ցորենաձավար	ՊաՍտացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստ-ված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված,"Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: տրաստված ցորենի ծեծած տեսակից, սպիտակ և թեփահան եղած: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	10	30	30	30	100	շաբաթական
	Բնական հյութ	Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Պատրաստված թարմ մրգերից: Գործարանային արտադրությամբ և փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	լիտր	30	90	90	90	300	շաբաթական
26	կոնֆետ-Կարամել	Կարամելկաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով:Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդհոդվածի:Թարմ, մրգային, տեղական արտադրության 2 տեսակի՝ նաբաթով և միջուկով, խոնավությունը՝ 3.0% ից ոչ ավելի, թթվայնությունը՝ -3-26: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	15	45	45	45	150	շաբաթական

28	Թթվասեր	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0Т, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20%-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 Т: Գործարանային	կգ	**10**	**30**	**30**	**30**	**100**	օրական
29	հավի ազդրամիս	Բրոյլեր տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	40	120	120	120	400	շաբաթական
30	հավի բուդ	Հավի մսեղիք առանց սառեցրած վիճակի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	10	30	30	30	100	շաբաթական
31	ջեմ տեղական	Ջեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	**25**	**25**	**25**	**25**	**100**	շաբաթական
32	Ալյուր	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: ՀՍ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Բարձր տեսակի, փայլուն սպիտակ գույնի, առանց ավելորդ խառնուրդների և հոտի, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	**0**	**25**	**0**	**25**	**50**	ամսեկան
33	Բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	25	75	75	75	250	շաբաթական
34	Հոկոլադե սալի	բաղադրությունը՝ կաթ, շոկոլադի յուղ:Թարմ, մրգային, տեղական արտադրության , խոնավությունը՝ 3.0% ից ոչ ավելի, թթվայնությունը՝ -3-26: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	հատ	20	60	**60**	**60**	**200**	շաբաթական
35	չամիչ	Տեղական խաղողի հումքով պատրաստված չամիչ:Հ.Հ. Գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	3	0	0	0	3	օրական

36	Խմորիչ	Չոր, գործարանային փաթեթավորված, չափածրարված, խոնավությունը՝ 8 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 80 % Բաղադրությունը՝բնական խմորիչներ,պարունակում է սպիտակուցներ,ճարպեր,ածխաջրեր:	կգ	0	0,5	**0**	**0,5**	**1**	շաբաթական
37	աղացած պղպեղ	Պատրաստվում է կարմիր չորացած պղպեղից,որոնք աղացվում են և նախատեսվում են ուտեստներում օգտագործելու համար:Հ.Հ. Օգտագործելու համար:	կգ	1	3	4	4	12	շաբաթական
38	վարունգ	Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և՝Սննդամթերքի անվտանգության մասին՝ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	0	60	80	60	200	օրական
39	լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և՝Սննդամթերքի անվտանգության մասին՝ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**կգ**	0	60	**80**	**61**	**201**	օրական
40	Կաղամբ	Թարմ գլուխ կաղամբ՝ մթերման համար: Թարմ գլուխկաղամբն ըստ հասունացման ժամկետների ստորաբաժանվում է հետևյալ տեսակների, վաղահաս, միջահաս և ուշահաս: Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներովվնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, վաղահասկաղամբը՝ տարբերաստիճանիփխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները, թույլատրվում է կաղամբի մակերևույթը ամուր չգրկող 2-4 հատ կանաչ տերևների առկայություն: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3- 0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստՀՀկառ¬վա¬րության 2006թ. դեկ¬տեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդհոդվածի:Գլուխ կաղամբ, առանց արտաքին վնասվածքների, չցրտահարված, սովորական տեսակների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	54	150	180	180	564	շաբաթական

41	գազար	Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	0	0	150	150	300	ամսեկան
42	խնձոր	տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	50	50	100	100	300	շաբաթական
43	ծիրան	Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	0	0	42	42	84	շաբաթական
44	դեղձ	Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	0	0	50	50	100	շաբաթական
45	սալոր	Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	0	0	35	15	50	շաբաթական
46	տանձ	Թարմ, առանց վնասվածքների և տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	0	0	25	25	50	շաբաթական

Մատատակարարման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ

<<Արթիկի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ-ի տնօրեն՝ **Հ. Աջամօղլյան**